ԳԼՈՒԽ ՃԼԳ.

Ամենայն գեօղ և գաւառ որում գտցի բնակողք մինչև երկու հազար տուն 'ի մէնջ, և կամ 'ի միոյ կողմ գաւառին 'ի անառիկ տեղիս շրջապատեսցի ամուր պարսպօք, և 'ի միջի շտեմարանօք և սենեկօք այնքան մեծութեամբ որ գտցի բնակութիւն և տեղի ապահովութեան երկու հազար տանց և խաշանց և ապրանաց և պաշարաց ամաց միոյ։

ԳԼՈՒԽ ՃԼԴ.

Իշխան 'ի վերայ ամենայն աշխարհին հայոց պարտաւոր լիցի 'ի ժամանակի աշնան և հնձելոյ ցորենոյ պարտաւորեսցէ ժողովրդեան բնակողաց 'ի յերեսս ամենայն գաւառաց իշխանութեան իւրոյ, զի 'ի տանէ և 'ի նոր ցորնէ իւրմէ ըստ իւրաքանչ ոք հարիւր կշիռ ցորեան մուծանիցէ 'ի շտեմարանս ամրոցի գաւառին իւրոյ և 'ի հին ցորենէ հանիցեն փոխարէն ցորեան անցելոյ տարուն առ տունն իւրեանց։

ԳԼՈՒԽ ՃԼԵ.

Որում տեղի և որում գաւառի 'ի յերեսս երկրին հայոց գուցէ ժանտ, մորեխ, կարկուտ և այլ զոր ինչ վնասակար, որում աւերեսցէ սերմանեցեալս և ժողովուրդ մնասցէ թափուր 'ի կե-